«Նոր ժամանակի կրթություն»

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման ՝ Ընթերցանությունը որպես ուսուցման գործիք տարրական դասարաններում

Առարկա ՝Մայրենի

Հետազոտող ուսուցիչ՝ Մարինե Գյուլբանդի Սարդարյան

Ուսումնական հաստատություն՝ Վրեժ Համբարձումյանի անվան համար 17 հիմնական դպրոց

Ղեկավար՝ Լ. Թևանյան

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն

1. Ընթերցանությունը որպես ուսուցման գործիք տարրական դասարաններում

1.1. Ընթերցանության մեթոդիկան, խնդիրներն ու նպատակները տարրական դասարաններում

1.2. Ընթերցանությունը որպես կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողությունների ձևավորման ու զարգացման միջոց

1.3. Ընթերցանության դասաժամերի կազմակերպման արդյունավետ ուղիներ

Եզրակացություն

Օգտագործված գրականության ցանկ

Ներածություն

Մարդիկ դադարում են մտածել, երբ դադարում են ընթերցել:

Դենի Դիդրո

Հետազոտության թեմայի արդիականությունը: Ընթերցանությունն ունի սոցիալ-հոգեբանական բնույթ, այն մշտապես համարել է կարևոր ուսուցման գործիք հատկապես տարրական դասարաններում, քանի որ հենց ընթերցանության միջոցով են կրտսեր դպրոցականները բացահայտում ուսումնական այս կամ այն նյութը, ճանաչում գրական-գեղարվեստական ստեղծագործությունները: Ընթերցանության տարբեր տեսակների իմացությունն օգնում է նաև ուսումնական գործընթացում ապահովել սան-դասագիրք, ուսուցիչ-սան երկխոսությունը՝ ստեղծելով տեղեկատվական ու հաղորդակցական միջավայր: Ներկայումս գիտության, տեխնիկայի արագ առաջընթացը, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների զարգացումը ստեղծել են այնպիսի պայմաններ, որ դպրոցականները տարբեր աղբյուրներից ստանում են տարաբնույթ և մեծեծավալ տեղեկատվություն, փոխում հետաքրքրության շրջանակը, կտրվում գրքի հետ հաղորդակցվելու բնական գործընթացից: Խնդիրն ավելի ու ավելի է խորանում տեղեկատվության արագ հոսքի, այն ստանալու աղբյուրների բազմազանության ու հասանելիության, ինչպես նաև տարաբնույթ գաջեթների առկայության պայմաններում: Եթե հաշվի առնենք նաև մանակավարժների և ծնողների ահազանգերն՝ այս խնդրի առնչությամբ, մասնավորապես՝ այն, որ հեռախոսներով, համակարգիչներով տարվելը առավել սրել է դպրոցականների ընթերցելողական հետաքրքրության պակասը, ապա կարող ենք վստահաբար ասել, որ ընթերցանության հետ կապված խնդիրների, այդ թվում՝ այն որպես ուսուցման գործիք արդյունավետ դարձնելու, ընթերցանության ձևավորող ու զարգացնող ներուժը առավելագույնն օգտագործելու հիմնահարցերի ուսումնասիրումը այժմեական խնդիր է: Կրտսեր դպրոցականների հետ աշխատող ուսուցիչը միշտ էլ պետք է զինված լինի սաների հետ ուսումնական և դաստիարակչական երկխոսություն ապահովող գործիքակազմով, իսկ տարրական դասարաններում

ուսուցման հիմնաքարային գործիքներից մեկը հենց ընթերցանությունն է: Այն այսօր պետք է նպատակաուղղել սաների ընթերցողական հետաքրքրության և կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը, ինչպես նաև ընթերցանությունը պետք է նրանց հետաքրքրությունը դեպի գիրքը, սերը դեպի ընթերցանությունը ձևավորելու միջոց դարձնել:

Հետազոտական հարցը՝ տարրական դասարաններում ընթերցանությունը բազմաբովանդակ և ճկուն դարձնելու ճանապարհով կարելի է արդյոք առավել ընդլայնել ուսուցանվող նյութերի ուսուցողական, զարգացնող և դաստիարակչական հնարավորությունները՝ այդ գործընթացում որոշակի նպատակներից և սպասվող արդյունքներից բխող մեթոդական կառույցի շարունակական զարգացման հենքով:

Հետազոտության նպատակը: Սույն հետազոտական աշխատանքի նպատակն է՝ ուսումնասիրել ընթերցանությունը որպես ուսուցման գործիք տարրական դասարաններում:

Հետազոտության խնդիրները: Հետազոտության նպատակից բխել են հետևյալ խնդիրները.

1. Ուսումնասիրել և վերլուծել հետազոտության թեմայի վերաբերյալ գիտամեթոդական գրականություն:
2. Նկարագրել ընթերցանության խնդիրները ու նպատակները տարրական դասարաններում:
3. Դիտարկել ընթերցանությունը որպես կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողությունների ձևավորման ու զարգացման միջոց
4. Վերհանել ընթերցանության դասաժամերի կազմակերպման արդյունավետ ուղիներ:

1. Ընթերցանությունը որպես ուսուցման գործիք տարրական դասարաններում

1.1. Ընթերցանության խնդիրներն ու նպատակները տարրական դասարաններում

Ներկայումս ուսուցիչները, հոգեբանները և ծնողները խոսում են ընթերցանության համակարգային ճգնաժամի մասին, որը բնութագրվում է գրքերի նկատմամբ հետաքրքրության նվազմամբ, դպրոցականների շրջանում ժամանցի ընթերցանության տոկոսի նվազմամբ, ընտանեկան ընթերցանության ավանդույթի կորստով և գրագիտության մակարդակի նվազման իրական սպառնալիքով[1]: Ասվածն առավել տարածված երևույթ է դարձել դպրոցականների շրջանում, հետևաբար դեռևս տարրական դասարաններում ընթերցանությունը պետք է դարձնել դեպի ընթերցելը սաների հետաքրքրության բորբոքման, նրանց ընթերցողական կարողությունների զարգացման արդյունավետ միջոց: Ընթերցանության նկատմամբ հետաքրքրության նվազումը վտանգավոր միտում է ցանկացած հասարակության համար, քանի որ ընթերցանության մշակույթի մակարդակը որոշում է հասարակության յուրաքանչյուր անդամի մասնագիտական, նյութական, հոգևոր, ինտելեկտուալ և հուզական գիտելիքներին տիրապետելու ունակությունը[2]:

Տարրական դպրոցում մայրենիի ուսուցման հիմնական նպատակն է՝

- ձևավորել և դասարանից դասարան զարգացնել երեխաների կարդալու կարողությունները (որակական հատկանիշների պահպանմամբ),

- մաքրել, հղկել և հարստացնել նախադպրոցական տարիքում և գրաճանաչության ողջ ընթացքում երեխաների ձեռք բերած բառապաշարը, զարգացնել կապակցված խոսք կառուցելու (գրավոր և բանավոր) ունակությունը,

- ձևավորել հաղորդակցական կարողություններ, բարեկիրթ խոսքի մշակույթ,

- ապահովել մայրենի լեզվից տարրական գիտելիքների, ունակությունների և հմտությունների ձեռքբերման համար անհրաժեշտ պայմաններ,

- ձևավորել փոքրածավալ տարաբնույթ ստեղծագործություններ ընթերցելու, դրանց հիմնական միտքը՝ գաղափարը, հասկանալու, ենթատեքստը կռահելու, հերոսների

[1] Галактионова, Т.Г. Чтение школьников как социально-педагогический феномен открытого образования: дис. на соиск. уч. степ. доктора пед.наук. СПб, 2008, 420 с.

[2] Тихомирова, И.И. Психология детского чтения от А до Я: Методический словарьсправочник для библиотекарей. М.: Школьная библиотека, 2004, 208 с.

գործողությունների տրամաբանությունն ըմբռնելու, դրանց շուրջ պարզ դատողություններ անելու կարողություններ,

- ձևավորել ձեռք բերած բարոյական արժեքներին հետևելու անհրաժեշտության գիտակցություն, դրանցով կյանքում առաջնորդվելու ունակություն, զարգացնել արժեհամակարգը և դաստիարակել նրա բաղադրիչները պահպանելու և հարստացնելու պահանջմունք,

- նպաստել իր բնակավայրի և այնտեղ ապրող մարդկանց զբաղմունքի, մշակութային արժեքների մասին գիտելիքների ձեռքբերմանը,

- գեղարվեստական նյութերի ընթերցման, լեզվական տարրական գիտելիքների և կարողությունների ձեռքբերման ճանապարհով ձևավորել հայեցի մտածողություն, ազգային հոգեկերտվածք, զարգացնել լեզվամտածողությունը, վերլուծական և քննադատական մտածողությունը,

- աշխարհաճանաչողական տարաբնույթ տեղեկությունների միջոցով ձևավորել պատկերացումներ շրջապատի, բնական և հասարակական երևույթների, մարդկանց և նրանց աշխատանքային գործունեության մասին, պայմաններ ստեղծել երեխաների իրավունքների և պարտականությունների մասին գիտելիքների ձեռքբերման և դրանք գործածելու ուղղությամբ ունակությունների մշակման համար,

- ապահովել երեխայի անձի զարգացումը՝ իրականացնելով բարոյական, գեղագիտական, գաղափարական դաստիարակություն, նպաստելով երեխայի ինքնաճանաչմանը, ինքնադրսևորմանը, ձևավորելով համագործակցային ունակություններ, համակեցության որակներ,

- սովորեցնել սովորել, գնահատել սեփական և ուրիշների արժեքները (գիտելիքները, փորձը, ձեռքբերումները), գիտակցել մայրենի լեզվի և գրականության արժեքների ձեռքբերման կարևորությունն ու անհրաժեշտությունը[3]:

Հաշվի առնելով մայրենիի ուսուցման նպատակի վերը նշված բաղադրատարրերը՝ կարևորվում է մայրենիի ուսուցման գործընթացի կառուցումը

[3] Գյուլամիրյան Ջ., Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Երրորդ՝ լրամշակված հրատարակություն, Երևան, 2015, էջ 93-94:

աշակերտակենտրոն սկզբունքով՝ առաջնորդվելով ձեռքբերում - դրա իմաստավորում և կիրառում - կիրառման ընթացքի վերլուծություն - եզրահանգումների կատարում - նոր գիտելիքի ձեռքբերում շղթայով: Այսինքն՝ շեշտադրվում է աշակերտի ակտիվության, ինքնուրույնության և ուսումնական գործընթացում նրա առավելագուն ներգրավվածությունն ապահովելու անհրաժեշտությունը: Ընդ որում՝ ընդգծելով և՛ աշակերտի, և՛ ուսուցչի երկկողմանի պատասխանատվությունը ուսումնական գործունեության համար՝ միաժամանակ իբրև վերջինիս անհրաժեշտ նախապայման նշվում են նրանցից յուրաքանչյուրի դրդապատճառները, նպատակները և խթանները:

Տարրական դպրոցում մայրենիի դասի **գլխավոր նպատակները** երեխաներին կարդալու բոլոր որակական հատկանիշների պահպանմամբ կարդալ սովորեցնելն է, ընթերցանության նկատմամբ հետաքրքրություն առաջացնելը և ընթերցողական կարողության ձևավորումը: Անշուշտ, եթե բավարար մակարդակով ձևավորված է կարդալու կարողությունը, ապա ընթերցված բնագրի շուրջ իրականացվող մեթոդապես ճիշտ աշխատանքի շնորհիվ ընթերցանությունը դառնում է նաև անձի ճանաչողական հետաքրքրությունների, բազմաբնույթ հետաքրքրությունների բավարարման, բազմակողմանի զարգացման միջոց: Այդ իսկ պատճառով ուսուցման սկզբնական փուլում հիմնական ուշադրությունը դարձվում է կարդալու, մասնավորապես հասկանալով կարդալու կարողության ձևավորմանը:

Մայրենիի դասերի պարբերաբար ունկդրումներն ու քննարկումները ցույց են տալիս, որ գեղարվեստական բնագրի առաջին ընթերցման ժամանակ աշակերտներն ընթերցած նյութի բովանդակության մասին ընդհանուր, մակերեսային պատկերացում են կազմում: Ուստի՝ կարևորվում է բնագրի՝ որոշակի հանձնարարականներով վերընթերցումը, երբ երեխաները պետք է անպայման ինչ-որ նորություն գտնեն, բացահայտեն նոր փաստեր, որոնք առաջին ընթերցման ժամանակ չէին նկատել, այլապես՝ վերընթերցումը կվերածվի մեխանիկական ու անհետաքրքիր աշխատանքի:

Կարդալու ուսուցումը տարրական դասարաններում մայրենիի դասի հիմնական նպատակն է: Ուսուցման այբբենական շրջանում ձևավորվում է

երեխաների կարդալու նախնական կարողությունը: Նրանք կարողանում են կարդալ փոքրածավալ բնագրեր, պատասխանել բնագրի վերաբերյալ ուսուցչի տված հարցերին և դրանց օգնությամբ վերարտադրում են բնագրի բովանդակությունը: Այս ամենը աշակերտին նախապատրաստում է բացատրական ընթերցանության մեթոդով կազմակերպվող մայրենիի դասին: Կարդալու կարողության մշակման արդյունավետությանը նախնական փուլում հատկապես նպաստում է բարձրաձայն ընթերցանությունը:

Կարդալը 6-7 տարեկան երեխայի համար բարդ աշխատանք է, որն իրականանում է բազմաթիվ հոգեկան գործընթացների միջոցով (մտածողություն, հիշողություն, կամք, զգացմունք և այլն): Ընթերցողական կարողության ձևավորման գերխնդիրն այնպիսի ընթերցողի ձևավորումն է, ով կարդալու ընթացքում ձեռք բերած տեղեկատվությունը մշակում է, իմաստավորում է և օգտագործում:

Մայրենիի դասի գլխավոր խնդիրը կրտսեր դպրոցականների կարդալու կարողության ձևավորումն է, որը ներկայանում է որպես ազատ, անկաշկանդ գործունեություն: Այն իրականանում է կարդացած բնագրի շուրջ նրա հեղինակի հետ երկխոսությունների մեջ մտնելու ճանապարհով՝ ձևավորելով ընթերցողական ընդարձակ և բազմաբնույթ հետաքրքրություններ: Ընթերցելն օգնում է երեխային մտածել ամենաբազմազան խնդիրների շուրջ, խնդիրներ, որոնց նա իր առօրյա կյանքում հաճախ չի բախվում. «Ընթերցելը մեկ ուրիշի օգնությամբ մտածելու արվեստ է, քանի որ կարդալ նշանակում է մտածել հեղինակի հետ միասին»[4]:

Հասկանալով կարդալու կարողության մշակումը կրտսեր դպրոցի ընթերցանության դասի գերխնդիրն է: Չպետք է մոռանալ, որ կարդալու կարողության ձևավորումը տարրական դպրոցի նպատակներից է, որը ուսուցման հետագա օղակներում դառնում է գիտելիքների ձեռքբերման միջոց: Աշակերտներին հասկանալով կարդալ սովորեցնելու պրակտիկայում գործածվում են բազմաթիվ հնարներ: Մասնավորապես, արդյունավետ է հատված առ հատված կարդալը և զույգերով մեկնաբանելը (իրար կողքի նստած), կարդացածի բովանդակության շուրջ

[4] Ջ. Գյուլամիրյան, Կարդալու կարողության և խոսքի զարգացումը տարրական դասարաններում, Ե., Լույս, 1998, էջ 4:

զրուցելը, իրար պատմելն ու դատողություններ անելը և այլն: Շահեկան է նաև կարդալ հանձնարարելուց առաջ բնագրի վերաբերյալ որոշակի առաջադրանքներ տալը, ընտրովի ընթերցանության տարաբնույթ ձևերի կիրառությունը, հատվածաբար կարդալն ու այդ հատվածի հիմնական բովանդակության վերլուծությունը և այլն[5]:

Գեղարվեստական (պատմվածք, բանաստեղծություն, հեքիաթ, առակ) և ժողովրդական (առած, ասացվածք, հանելուկ, շուտասելուկ և այլն) մանրապատում ստեղծագործությունների ուսումնասիրումն իրականացվում է ընդհանուրից մասը գնացող հաջորդականությամբ, քանզի բնագրի ամբողջությամբ կարդալուց հետո է միայն հնարավոր հասկանալ նրա հիմնական միտքը՝ գաղափարը, կռահել ենթատեքստը, և միայն այդ դեպքում ստեղծագործությունը կարող է երեխաների վրա դաստիարակչական ներգործություն ունենալ, առաջացնել համանման հույզեր և զգացմունքներ: Շահեկան է, որ հենց սկզբից աշակերտներն ինքնուրույն ընթերցեն ստեղծագործությունը, որպեսզի հետաքրքիր լինի կարդալը, և նրանք ձգտեն մինչև վերջ ընթերցել այն:

Այս կամ այն ստեղծագործության ընթերցումը պետք է կազմակերպել՝ կիրառելով կարդալու բոլոր տեսակները՝ շարունակելով, մեկնաբանելով, ընտրովի, դերերով: Բազմակի ընթերցանության ժամանակ երեխաների հետաքրքրությունը բորբոքվում է ոչ միայն բազմաբնույթ առաջադրանքների, այլև ծավալած մտավոր գործունեության նկատմամբ ուսուցչի ցուցաբերած օգնությամբ, հետաքրքրությամբ. Ուսուցիչը զգացմունքային, արտահայտիչ միջոցներով դրսևորում է իր հետաքրքրությունն ու անկեղծ վերաբերմունքը երեխաների ընթերցանության և արտահայտած մտքերի նկատմամբ: Նրա հիացմունքը ոգևորում է երեխաներին, և նրանք սկսում են ավելի ոգեշնչված կարդալ, կարդացածի մեջ նոր իմաստներ տեսնել, դատողություններ և մտահանգումներ անել[6]: Այսինքն՝ ընթերցանությունը պետք է լինի դինամիկ, կենդանի գործընթաց, որին կմասնակցեն բոլոր սաները՝ բանավոր և գրավոր տարաբնույթ առաջադրանքներ կատարելով: Ըստ էության, «ընթերցանությունը պետք է դառնա ակտիվ գործընթաց, որն ստիպում է մտածել

[5] Գյուլամիրյան Ջ., նշվ. աշխ., էջ 102-105:
[6] Նույն տեղում, էջ 114-115:

ընթերցվող նյութի մասին»[7]: Ընթերցանության ակտիվ գործընթաց կազմակերպելուն պետք է նպատակաուղղել փոխներգործուն մեթոդները:

1.2. Ընթերցանությունը որպես կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողությունների ձևավորման միջոց

Ընթերցանության միջոցով կրտսեր դպրոցականների ընթերցողական հետաքրքրության և կարողությունների ձևավորումը կարող է արդյունավետ լինել հետևյալ քայլերի իրականացմամբ: Այսպես՝ ուսուցանվող նյութը կարդալուց և ընդհանուր տպավորությունը քննարկելուց առաջ սաներն ընթերցում են դասանյութի վերնագիրը, և ուսուցչի հանձնարարությամբ դիտարկում, թե իրենց կարծիքով ինչի մասին կարող է լինել այն: Աշակերտներն առաջադրում են իրենց վարկածներն ու մեկնաբանություններ կատարում: Նմանատիպ քննարկումից հետո սկսվում է նյութի ընթերցանությունը: Սա **արտադասարանային ընթերցանություն** է: Դասանյութն առաջինն ընթերցում են աշակերտները՝ շարունակելով: Այնուհետև մի քանի ավանդական հարցից հետո (դու՞ր եկավ ընթերցածը, ի՞նչը դուր եկավ հատկապես, որո՞նք են ամենատպավորիչ հատվածները, ո՞ր տողերն են արտահայտում հիմնական գաղափարը, ի՞նչ զգացիր, ի՞նչ տեսար) դիտարկվում է ամենախնդրահարույց և ամենաէական հարցը. «Ի՞նչ զգացմունքներ ունեցաք ընթերցելիս»: Երեխաները ներկայացնում են իրենց զգացմունքները, օրինակ՝ տխրություն (խղճալու, ցավի, ափսոսանքի) և ուրախություն: Այնուհետև ուսուցչի ուղղորդմամբ՝ աշակերտներն ուշադրություն են դարձնում ստեղծագործության կարևոր այն հատվածների վրա, որոնց համադրումը առաջացնում է երեխաների հետաքրքրությունը և օգնում գնալ ստեղծագործության գլխավոր հիմնախնդրի լուծման ուղղությամբ: Աշակերտները ձևակերպում են ստեղծագործության բանալի հարցը. ինչու՞…

Եվ այսպես, ինչի՞ց սկսել կարդացած բնագրի վերլուծությունը, ի՞նչ է նշանակում գրական ստեղծագործությունը վերլուծելը: Դրա համար աշակերտներին

[7] Լ. Բալայան, Ընթերցանությունը՝ ակտիվ գործընթաց, Նախաշավիղ, 3-4, Գիտամեթոդական հանդես, ԿԱԻ, Երևան, 2009, էջ 44:

առաջին հերթին պիտի սովորեցնել տեքստում հաջորդաբար առանձնացնել բանալի հատվածները, այն կերպարները, բառերը, որոնք արտահայտում են ստեղծագործության հերոսների գործողությունների հիմնական դրդապատճառները, գաղափարները, հեղինակի նպատակադրումները, հերոսի մենախոսությունը, որի միջոցով բացահայտվում է հերոսի հոգում կուտակված, նրա բնավորության մեջ առկա շատ կարևոր մի բան:

Հարցերի շուրջ իրականացվող աշխատանքի ժամանակ շատ կարևոր է բոլոր աշակերտներին խոսելու հնարավորություն տալ՝ չբացառելով և չխոչընդոտելով ամենահակասական, ամենաերևակայական բացատրությունները. կարևոր են ոչ միայն աշակերտների բացատրությունները, այլև նրանց արտասանած յուրաքանչյուր բառի, մտքի, ամենաանշան իմաստի՝ ռացիոնալ հատիկի առանձնացումը. նկատել և գնահատել նույնիսկ ամենաչնչին ուշագրավ միտքը, որը տանում է դեպի հարցի պատասխանը, ոգևորել այդ պատասխանների համար յուրաքանչյուրին՝ նշելով, որ այն ուշագրավ միտք է և արժանի է քննարկման:

Հաջորդ քայլում անհրաժեշտ է որոշել բնագրի **բանալի բառը** (կամ բառերը), որոնց օգնությամբ հնարավոր է բացահայտել հերոսների, գործող անձանց հիմնական միտքը, նպատակը, նրանց գերագույն նկրտումները՝ լինել ազնիվ, խելացի, հանդուրժող: Այս խնդրի լուծման համար անհրաժեշտ է ստեղծագործության կարևոր հատվածները մեկ անգամ ևս ընթերցել և առանձին-առանձին քննարկել՝ հետաքրքրություն առաջացնելով դրանցում արտահայտված յուրաքանչյուր մտքի, արտահայտության, բառի նկատմամբ: Այսպիսի վերլուծության արդյունքում աշակերտները գալիս են ևս մի կարևոր հետևության և կատարում են իրենց համար չափազանց էական ու արժեքավոր եզրակացություն:

Հարցադրումների և աշակերտների հնչեցրած մեկնաբանությունների ընթացքում լսելով և քննարկելով նրանցից յուրաքանչյուրի պատասխանը՝ ուսուցիչը պետք է առաջարկի քննարկվող հարցի վերաբերյալ իր տեսակետը և այն, դարձյալ հարցադրումների միջոցով քննարկման դնի: Արդյունքում՝ աշակերտները հնչեցված պատասխանների հիման վրա կատարում են եզրակացություն և փորձում հիմնավորել այն:

Այսպիսով՝ ընթերցանության նկատմամբ աշակերտների հետաքրքրության, նրանց ընթերցողական կարողությունների ձևավորման համար պետք է.

- որևէ ստեղծագործություն դասարանում կարդալուց հետո անպայման քննարկել նրանում ներկայացված բարոյական, հոգևոր արժեքները, դրա շուրջ իրականացնել վերլուծություն,
- նախապես որոշել այն հատվածները, գործող անձանց այն մենախոսությունները, առանձին մտքերը, որոնց շուրջ պիտի վերլուծական գործունեություն ծավալվի, մշակել մոտեցումների տարբերակներ, որպեսզի աշակերտներին ընտրության հնարավորություն տրվի,
- որոշել նաև, թե կարդացած ստեղծագործության շուրջ քննարկումը քանի դասաժամում պիտի իրականացվի մեկ դասի, թե երկու, որպեսզի քննարկվող հարցերը տրամաբանորեն հիմնավորված բաշխվեն այդ դասաժամերի միջև,
- նկատի ունենալ, որ աշակերտների առջև դրվող ամենաբարդ հարցերն ու մեկնաբանությունները պիտի ձևակերպել գիտական հիմքերով, պարզ, հստակ, մատչելի, բայց ոչ պարզունակ,
- բացառել ուսուցչի կամ աշակերտների արտահայտած կարծիքների, տեսակետների անառարկելիությունը, անհանդուրժողականությունը աշակերտների կարծիքների նկատմամբ,
- ցանկալի եզրակացությունը պատրաստի չներկայացնել աշակերտներին. ուղղություն տալու համար շահեկան է կարծիքների, ընդհանրացումների տարբերակների ներկայացումն ու դրանց քննարկումը աշակերտների կողմից:

Ուսուցչի խնդիրներից է՝ դպրոցականների ընթերցանության մշակույթը զարգացնելը: Դա տեղի է ունենում կրթական գործունեության կազմակերպման տարբեր ձևերի միջոցով՝ աշխատանք զույգերով և փոքր խմբերով, երկխոսություններ և քննարկումներ[8]: Ընթերցանության նման գործընթաց կազմակերպելու հարցում առանցքային դեր ունի այս կամ այն մեթոդի ընտրությունը, իսկ այստեղ կարելի է առաջնորդվել այն մոտեցումով, որի համաձայն՝ «ուսուցիչն ստեղծագործաբար է մոտենում ցանկացած մեթոդի կիրառման հարցին և անհրաժեշտ փոփոխություններ

[8] Васильева Н.В. Приобщение к чтению младших школьников через организацию учебного взаимодействия на основе содержания книги. Экстрант РФ. Спб. 2022, 2 (12), с. 7.

կատարում հարմարեցնելով այն իր և աշակերտների նպատակներին ու խնդիրներին, ճիշտ օգտագործում առկա հնարավորությունները»[9]: Նմանօրինակ մոտեցումն ընդունելի է, քանի որ ուսուցման գործընթացը միատարր չի կարող լինել: Այն «ստեղծվում է» ուսուցչի և աշակերտների համատեղ գործունեությամբ՝ նախապես սահմանված նպատակի և խնդիրների ակնկալվող արդյունքների համաձայն, սակայն ենթակա է փոփոխությունների և պահանջում է ստեղծարար մոտեցում նաև մեթոդների գործադրման հարցում: Ընթերցանության դասաժամի կազմակերպման մեթոդի ընտրությունը կախված է դասի թեմայից և նպատակից, կախված ուսուցման նպատակից՝ կարելի է նաև նույն աշխատանքը կատարելիս ընտրել տարբեր մեթոդներ: Նման մոտեցումով աշխատանքը ոչ միայն հետաքրքրություն է առաջացնում կարդալու նկատմամբ, այլ նաև օգնում է աշակերտներին կարդացած ստեղծագործության գործող անձանց դրսևորած հարաբերությունների, վարքի վերլուծության միջոցով ճանաչել կյանքը, մարդկանց կենսական դրսևորումները և դասեր քաղել ոչ միայն սեփական, այլև ուրիշների սխալներից, ընդօրինակել ճիշտը, արդարացին, նվիրականը: Այսպիսով միայն աշակերտը որևէ ստեղծագործություն ընթերցելիս կհասկանա, կգիտակցի, որ պիտի գիրք կամ որևէ նյութ կարդալիս կարևորի մտքերը, գաղափարները, կարողանա դրանք տեղափոխել իր կյանք և օգտվել դրանցից: Այդ դեպքում նա կսիրի գիրքը, կդառնա հասկացող ընթերցող:

1.3. Ընթերցանության դասաժամերի կազմակերպման արդյունավետ ուղիներ

Կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողությունների ձևավորման գործընթացն առավել արդյունավետ դարձնելուն, ինչպես դասարանական, այնպես էլ արտադասարանական, ինքնուրույն ընթերցանության կազմակերպման գործընթացի արդիականացման հնարավորությունների ընդլայնման համար ներկայումս արդիական է և առանցքային նշանակություն ունի ուսուցման ժամանակակից մեթոդների ներդրումն ու գործածումը, առկա փորձի կիրառումը, նոր փորձի ձեռքբերումն ու բարելավումը, ինչպես նաև մանկավարժական մոտեցումների

[9] Բալայան Ա., Մայրենի լեզվի դասերին կիրառվող մեթոդների ընտրության հարցի շուրջ, Նախաշավիղ, 5-6, Գիտամեթոդական հանդես, ԿԱԻ, Երևան, 2007, էջ 37:

մշակումը: Կարևորվում են նաև այդ մեթոդների ու մոտեցումների վրա հիմնված վարժությունները: Կարծում ենք՝ դեպի ընթերցանությունը կրտսեր դպրոցականների սերը և հետաքրքրությունը խթանելուն մեծապես կնպաստի ընթերցանության դասաժամերի արդիականացումը, որով հնարավոր կլինի ուղի հարթել ուսումնական գործընթացի, մասնավորապես ինքնուրույն ընթերցանության գործընթացի արդյունավետ կազմակերպման համար և այն դարձնել նպատակային, լուծել ուսումնական կոնկրետ խնդիրներ՝ համարժեք մեթոդների ընտրությամբ և նպատակային գործադրմամբ: Ասվածն առավել շեշտադրվում է տարրական դպրոցում ինքնուրույն ընթերցանության արդյունավետ կազմակերպման մեթոդների ընտրության, նպատակային և հետևողական կիրառման հարցի համատեքստում, քանի որ երեխայի մտածողության, հոգեբանության ձևավորման համար մեծ նշանակություն ունի տարրական դպրոցը:

Հիմք ընդունելով և կարևորելով հանրակրթական առարկայական չափորոշչային և ծրագրային պահանջները՝ փորձել ենք նկարագրել և վերլուծել մեր կողմից մշակված մեթոդական-գործնական աշխատանքը՝ ընթերցանության միջոցով կրտսեր դպրոցականների ինքնուրույն ընթերցանության դասաժամերի կազմակերպման մեթոդների գործնական կիրառմանն ու վերլուծությանը, նրանց ընթերցողական հետաքրքրության ու կարողությունների ձևավորմանը:

Երրորդ դասարանի դասընթացում կարևոր տեղ է հատկացվում *հեքիաթի* ուսումնասիրմանը: Հեքիաթը երեխաների ստեղծագործական կարողությունները, ճանաչողական ակտիվությունը զարգացնելու, ինքնաբացահայտվելու մեծ հնարավորություն է տալիս, այն նաև դաստիարակչական կարևոր նշանակություն ունի, ուստի հարկավոր է այս նյութի ուսումնասիրումն իրականացնել այնպիսի մեթոդներով, որը նշված նպատակներն առավել արդյունավետ կերպով իրագործելու հնարավորություն կտա:

Այս դասընթացում նախատեսված նյութերից է օրինակ՝ «Սիզախոտի երազը» հեքիաթը[10]: Նյութի ուսուցման սկզբում ուսուցչի օգնությամբ աշակերտները հեքիաթի վերաբերյալ նշում են այն, ինչ սովորել են նախորդ դասընթացներից, այնուհետև՝

[10] Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն., Մայրենի 3, Երևան, 2011, էջ 7-8:

ուսուցիչը աշակերտներին հիշեցնում է հեքիաթին բնորոշ մի շարք առանձնահատկություններ (մասնավորապես՝ կառուցվածքի, բովանդակության, հերոսների, վերջաբանի առնչությամբ) և տարրական գիտելիքներ է տալիս հեքիաթի վերաբերյալ, որից հետո՝ ընթերցում է հեքիաթը: Այս նյութի ուսումնասիրումը զուգորդվում է հեքիաթի գաղափարը կրող բանահյուսական այնպիսի նյութերի ուսումնասիրությամբ, ինչպիսիք են առածներն ու ասացվածքները: Այսպես՝ «Հարազատ տնից լավը չկա», «Լավ վարդն իր հողում կբուսնի» առած-ասացվածքների օգնությամբ երեխաները հեշտությամբ վերհանում են հեքիաթի հիմնական միտքը՝ օտարության մեջ մարդը չի կարող երջանիկ լինել, լավ է լինել սեփական ու հարազատ տանը, հայրենիքում, բայց լինել ինչպես մյուսները՝ ապրել սովորական կյանքով, ընկերների և հարազատների կողքին, քան լինել օտար վայրում ու ապրել փառքի, վայելքի մեջ, բայց լինել տխուր, միայնակ ու ապրել հայրենի տանն ու հողին, ընկերներին և հարազատ մարդկանց կարոտ: Հեքիաթի ուսումնասիրման այս մոտեցումով երեխաների համար տեսանելի է դառնում նաև առած-ասացվածքների՝ մի ամբողջ միտք մեկ նախադասությամբ, հակիրճ, բայց դիպուկ արտահայտելու առանձնահատկությունը և խրատական նշանակությունը:

Հեքիաթն ընթերցելուց հետո ուսուցչի հանձնարարությամբ՝ երեխաներն ընթերցում են «Իմաստունի զրույցը»[11] հատվածում հեքիաթի վերաբերյալ տրված տեղեկությունը, փորձում դրա հիման վրա իրենց արդեն ծանոթ հեքիաթում գտնել, թե հեքիաթի որ առանձնահատկություններն են առկա, օրինակ՝ բարի ու գեղեցիկ ավարտ, հեքիաթի հերոսը՝ բույս և այլն:

Այս կամ այն դասանյութի ուսումնասիրումն առավել հետաքրքրական դարձնելու և աշակերտների ուշադրությունը տվյալ դասանյութի ընթերցման վրա գրավելու, ինչպես նաև նրանց ընթերցանության նկատմամբ հետաքրքրությունը մեծացնելու, ստեղծագործական ներուժը զարգացնելու նպատակով՝ նպատակահարմար է համեմատաբար ծավալուն նյութերն ուսումնասիրել համագործակցային ուսուցան տարրեր կիրառելով, այսպես՝ ուսուցումն սկսել ուսուցչի նախաբանով, որը կարող է լինել նյութի հետ կապված, այն փոխլրացնող

[11] Նույն տեղում, էջ 10:

կամ նրանից բխող *առած, ասացվածք* կամ *ասույթ*, կամ ուսուցչի կողմից նախապես ընտրված այնպիսի հարցերով, որոնց պատասխանները հանգեցնում են ուսումնասիրվելիք նյութի բովանդակության բացահայտմանը: **Վարժություն: Հորինել արդեն քննարկված թեմայի, առածի, ասացվածքի կամ գաղափարի մասին փոքրիկ հեքիաթ կամ պատմվածք:** Իբրև նախաբան ընտրված առածի, ասացվածքի կամ ասույթի ուսումնասիրմանը կարող է հաջորդել վերջիններիս արծարծած խնդրի, թեմայի շուրջ որևէ հեքիաթ կամ պատմվածք հորինելու առաջադրանքը, որն իրականացվում է ***հինգրոպեանոց ազատ շարադրանք մեթոդով***[12]**:** Այնուհետ՝ հորինված նյութերին ծանոթանալուն նախորդում է ուսումնական նյութով նախատեսված բուն հեքիաթի ընթերցումը, որից հետո արդեն ընթերցվում են աշակերտների հորինած հեքիաթները, առանձնացվում բուն ուսումնական նյութով նախատեսված հեքիաթի հետ ունեցած ընդհանրություններն ու տարբերությունները (այս կերպ կընդգծվի նաև առածի, ասացվածքի կամ ասույթի կարևորությունը): Նման մոտեցման շնորհիվ՝ կձևավորվեն նաև թիմով աշխատելու, համագործակցելու կարողություններ և հմտություններ:

3-րդ դասարան, ուսումնասիրվող դասանյութ՝ «Յոթ փայլուն աստղերը» (հնդկական ժողովրդական հեքիաթ):

Այս հեքիաթն ուսումնասիրվում է «Ուղղորդված ընթերցանության» մեթոդով: Երրորդ դասարանում աշակերտներն արդեն որոշակի պատկերացում ունեն հեքիաթի մասին, սակայն ուսուցչի խնդիրն է՝ բանահյուսական այս նմուշների վերաբերյալ նրանց տեսական գիտելիքներն առավել ընդլայնել: Ուստի՝ մինչ բուն նյութն ուսումնասիրելը՝ ուսուցիչը նախ աշակերտներին ուղղված հարցադրումների միջոցով հիշեցնում է, թե նրանց ինչ հեքիաթներ են հայտնի, որից հետո հանձնարարվում է տեքստն ընթերցել տրամաբանական ավարտ ունեցող հատվածներով, կազմել պլան և ըստ պլանի բանավոր վերապատմել դասանյութով նախատեսված հեքիաթը: Այսպես՝ յուրաքանչյուր հատված ընթերցելուց հետո, ուսուցչի ուղղորդող հարցերով, վերլուծության է ենթարկվում ընթերցվածը, կատարվում են մեկնաբանություններ և կանխատեսումներ: Հեքիաթի բովանդակության վերլուծությունն ամփոփվում է հաջորդիվ տրված ասացվածքների

[12] Ափոյան Ա. Է., Համագործակցային ուսուցումը տարրական դասարաններում, Գիտական տեղեկագիր, Պրակ Բ, Գյումրի, 2014, էջ 341:

ուսումնասիրությամբ, և աշակերտները կարողանում են հեշտորեն ընկալել հեքիաթի և ասացվածքների տրամաբանական և գաղափարային միասնությունն ու ընդհանրությունը, այն, որ միայնակ մարդը չի կարող հաղթահարել կյանքի դժվարություններն ու փորձությունները: Ասացվածքներով ընդգծվում է հեքիաթում արտահայտված փոխօգնության, կամեցողության, բարության կարևորությունը: Նախորդող դասանյութի հետ առած-ասացվածքների զուգակցված ուսումնասիրումը աշակերտներին հնարավորություն կտա մեկնաբանել առածի,ասացվածքի իմաստը՝ կապելով այն բնագրի բովանդակության հետ: Ուսուցչի հանձնարարությամբ՝ աշակերտները վերլուծում են առածը, այն ահմեմատում բնագրի հերոսների արարքների հետ և գտնում բնագրի բովանդակության և առածի գաղափարական կապը:

Հեքիաթի ընթերցումն առավել հետաքրքրական դարձնելու համար կազմակերպվում է արտահայտիչ ընթերցանության մրցույթ, ընդ որում՝ երեխաներին առաջադրվում է այն ընթերցել հատվածներով, յուրաքանչյուր հատվածի ընթերցումից հետո՝ կանխագուշակելով, թե ինչ կլինի հետո, նույն կերպ՝ հորինել հեքիաթի շարունակությունը՝ երևակայության միջոցով նոր լուծումներ գտնելով բնագրում ներկայացված իրավիճակի համար, որը խթանում է սովորողների ստեղծագործական երևակայությունը, նաև կարծիքներ են հայտնում բնագրի շարունակության շուրջ, վերհանում հեքիաթի բարոյախոսությունը, նշում, թե հեքիաթի հերոսներն ինչ ընդհանուր հատկանիշներով են բնորոշվում: Ապա առաջադրվում է կանխագուշակել՝ ինչ ավարտ կունենա հեքիաթը:

4-րդ դասարանում ինքնուրույն ընթերցանության կազմակերպումը հենվում է աշակերտների ունեցած գիտելիքների վրա, ուստի՝ ընթերցանությանը նախորդում է ուսուցչի խոսքը, որի ընթացքում նպատակահարմար է կիրառել ուսուցման զրույցի մեթոդը, «երբ ուսուցիչը նպատակամետ և վարպետորեն առաջադրված հարցերի միջոցով սովորողների մեջ արթնացնում է նրանց արդեն ունեցած գիտելիքներն ու կարողությունները և մղում նոր գիտելիքների ձեռքբերման՝ ինքնուրույն

դատողությունների, եզրահանգումների ու ընդհանրացումների ճանապարհով»[13], որից հետո նա աշակերտներին պարզագույն տեղեկություններ է հաղորդում նոր դասանյութի հիմնական գաղափարի մասին: Ուսուցիչը նախապես աշակերտների ուշադրությունը սևեռում է ընթերցելու համար նախատեսված դասանյութի հիմնական մտքի վրա, ընդգծում դրա կարևորությունը, օգտակարությունը մարդու կյանքում՝ նրանց մեջ այն ընթերցելու հետաքրքրություն առաջացնելով: Սա կարելի է համարել կրտսեր դպրոցականներին ինքնուրույն ընթերցանության մղելու մեթոդ: Ուսուցչի խոսքն ուղեկցվում է զրույցի, ընթերցանության, մեջբերումների տարրերով, աշակերտների խաղային և ստեղծագործական աշխատանքով: Ընթերցանությունը կարելի է նաև ուղղորդել հարցադրումներով: Այսպես՝ մինչ դասանյութի տրված հատվածի ընթերցանությանն անցնելը՝ ուսուցիչն աշակերտներին հարցադրումներով օգնում է վերհիշել տվյալ նյութի վերաբերյալ իրենց գիտելիքները:

Եզրակացություն

Ամփոփելով սույն հետազոտական աշխատանքը՝ հանգել ենք հետևյալ եզրակացություններին.

[13] Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, Վանաձոր, 2008, էջ 41:

1. Ընթերցանությունն իր բոլոր տեսակներով, կրթության հիմնաքարային գործիքներից է, ուստի առանձնակի ուշադրություն պետք է դարձնել այդ գործընթացին նպատակային ու ավելի արդյունավետ բնույթ հաղորդելուն, որը վերաբերում է նաև կրտսեր դպրոցականների ընթերցողական հետաքրքրության ձևավորման գործընթացի, ինքնուրույն ընթերցանության դասաժամերի կազմակերպմանը: Այս հարցն առավել ակնառու է դառնում հատկապես տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաների բուռն զարգացման արդի պայմաններում:
2. Տարրական դասարաններում ընթերցանությունը պետք է լինի բազմաբովանդակ և ճկուն, նպատակաուղղվի ուսուցանվող դասանյութերի ուսուցողական, զարգացնող և դաստիարակչական հնարավորություններն ընդլայնելուն՝ այդ գործընթացում որոշակի նպատակներից և սպասվող արդյունքներից բխող մեթոդական կառույցի շարունակական զարգացման հենքով:
3. Տարրական դասարաններում սովորողների ընթերցողական կարողության զարգացման համար ընթերցանության գործընթացում առանցքային խնդիր է ուսուցման գործընթացի արդիականացումը: Ըստ այդմ էլ՝ առանձնակի կարևորվում են ինչպես ավանդական (ուսուցչի խոսք, զրույց, վերլուծություն), այնպես էլ ժամանակակից մեթոդները:
4. Տարրական դասարաններում մայրենիի առարկայական ծրագրի ընթերցանության բաժինը բովանդակային և կառուցվածքային բարդ համակարգ է, որը ներառում է կրտսեր դպրոցականների կարդալու կարողությունների, հմտությունների ձևավորման և՛ աստիճանական՝ պարզից բարդ անցնելու սկզբունքով, և՛դրանց իրականացման գործունեության համալիր:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ափոյան Ա. Է., Համագործակցային ուսուցումը տարրական դասարաններում, Գիտական տեղեկագիր, Պրակ Բ, Գյումրի, 2014:

2. Բալայան Ա., Մայրենի լեզվի դասերին կիրառվող մեթոդների ընտրության հարցի շուրջ, Նախաշավիղ, 5-6, Գիտամեթոդական հանդես, ԿԱԻ, Երևան, 2007:
3. Գյուլամիրյան Ջ., Կարդալու կարողության և խոսքի զարգացումը տարրական դասարաններում, Ե., Լույս, 1998:
4. Գյուլամիրյան Ջ., Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Երրորդ՝ լրամշակված հրատարակություն, Երևան, 2015:
5. Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն., Մայրենի 3, Երևան, 2011:
6. Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, Վանաձոր, 2008:
7. Васильева Н.В. Приобщение к чтению младших школьников через организацию учебного взаимодействия на основе содержания книги. Экстрант РФ. Спб. 2022, 2 (12), с. 7-13.
8. Галактионова, Т.Г. Чтение школьников как социально-педагогический феномен открытого образования: дис. на соиск. уч. степ. доктора пед.наук. СПб, 2008, 420 с.
9. Тихомирова, И.И. Психология детского чтения от А до Я: Методический словарьсправочник для библиотекарей. М.: Школьная библиотека, 2004.